**Հավելված 2**
**2025 թ. հունվարի 23-ին**
**կնքված N ԴՏՊ-1141-11018/25 ԱՌՀԱՐ6 պայմանագրի**

## Դրամաշնորհային հաշվետվություն N 1

**1. Ընդհանուր տեղեկատվություն**

| | |
|---|---|
| **Ծրագրի անվանում** | **«Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում»** |
| **Դրամաշնորհի N** | **«ԱՍՀՆ-ԴՄ-ԵԽՑԾ-25/7-1»**<br>**Արարատի մարզ, ք. Արտաշատ** |
| **Դրամաշնորհատու կազմակերպություն** | **ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն** |
| **Դրամաշնորհառու կազմակերպություն** | **«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն** |
| **Միջոցառման իրականացման ժամանակահատված** | 01 հունվար, 2025թ. - 31 դեկտեմբեր, 2025թ. |
| **Հաշվետու ժամանակահատված** | 03 հունվար 2025թ.- 31 մարտ 2025թ. |
| **Ներկայացման օր** | 10. 04. 2025թ. |
| **Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)** | Գայանե Վրթանեսյան՝ սոցիալական աշխատող |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

<<Առաքելություն Հայաստան>> բարեգործական հասարակական կազմակերպությունը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ֆինանսավորմամբ Արարատի մարզում իրականացնում է <<Երեխաների խնամքի ցերեկային ծառայության տրամադրում>> ծրագիրը, որի շրջանակում մարզի՝ ԿԴԻՀ մինչև 18 տարեկան 157 երեխաներին և նրանց ընտանիքի անդամներին կտրամադրվեն սոցիալ-հոգեբանական, կրթական, խորհրդատվական, վերականգնողական ծառայություններ: Ծրագիրը միտված է խթանելու երեխաների սոցիալ-վերականգնողական, ընտանիքում մեծանալու հիմնարար իրավունքների իրացումը, կանխելու նրանց մուտքը հաստատություններ և/ կամ նրանց սոցիալական մեկուսացումը՝ խթանելով ԿԴԻՀ երեխայի ինքնօգնության, ինքնորոշման ու ծագած հիմնախնդիրներն ինքնուրույն լուծելու ունակությունների զարգացմանը, նպաստելու համայնքի մշակութային կյանքին վերջիններիս մասնակցությանը, ինչպես նաև աջակցելու հաստատություններում խնամք ստացող երեխաների՝ընտանիքների հետ վերամիավորմանը: Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի կատարման ենթակա հիմնական գործողությունները հետևյալն են՝

- Տրամադրել սոցիալական ծառայություններ ԿԴԻՀ մինչև 18 տարեկան երեխաներին և նրանց ընտանիքի անդամներին,
- Տրամադրել հոգեբանական աջակցություն ԿԴԻՀ մինչև 18 տարեկան երեխաներին և նրանց ընտանիքի անդամներին,
- Տրամադրել առողջապահական, սոցիալական և կրթական հարցերի շուրջ խորհրդատեղեկատվական աջակցություն և ուղղորդում,
- Տրամադրել վերականգնողական/ թերապևտիկ ծառայություններ,
- Տրամադրել կրթական աջակցություն, նպաստել կյանքի հմտությունների զարգացմանը,
- Տրամադրել ԿԴԻՀ կամ հաշմանդամություն ունեցող երեխաներին անձնական ուղեկցողի ծառայություն,
- Սոցիալական աշխատանք իրականացնել շուրջօրյա խնամքի 5 հաստատություններում խնամվող երեխաների և նրանց ընտանիքների հետ՝ ընտանիքների հետ վերամիավորման բաղադրիչի շրջանակում:

**2.2 Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

**Սոցիալական աջակցություն միջոցառումներ.** Սոցիալական աշխատողների կողմից, իրականացվել է կարիքի գնահատում, որի հիման վրա որոշվել է շահառուին տրամադրվող ծառայությունների շրջանակը: Երեխայի և ընտանիքի կարիքների գնահատումը իրականացվել է տնայցերի միջոցով: Հաշվետու ժամանակահատվածում սոցիալական

աշխատողների կողմից իրականացվել է 96 տունայց, կարիքի գնահատման և 51 վերագնահատման նպատակով, որից 24-ը՝ Արցախից տեղահանված ընտանիքի: Վերհանված կարիքներից ելնելով՝ սոցիալական աշխատողների կողմից ընտանիքներին տրամադրվել է սոցիալական խորհրդատվություն, իրականացվել են ուղղորդումներ: Կարիքի գնահատման և բազմամասնագիտական թիմի քննարկման հիման վրա, յուրաքանչյուր շահառուի համար կազմվել է սոցիալական զարգացման ծրագիր: Համալիր կարիքների հայտնաբերման դեպքում սոցիալական աշխատողների կողմից իրականացվել է դեպքի վարում, որն իր մեջ ներառել է՝ սոցիալական դեպքի փաստաթղթավորված ամբողջական փաթեթ, միջամտության պլանի կազմում, սոցիալական խորհրդատվության, անհրաժեշտ տեղեկատվության տրամադրում, ուղղորդումների իրականացում, մշտադիտարկում և շարունակական վերահսկողություն: Սոցիալական աշխատողների կողմից պարբերաբար իրականացվել է կարիքների վերագնահատում և անհրաժեշտության դեպքում սոցիալական ծառայությունների տրամադրում: Շահառուների հետ կապը սոցիալական աշխատողների կողմից պահպանվել է կենտրոնում հանդիպումների և արտակենտրոն ծառայությունների միջոցով: Իրականացված կարիքի գնահատման հիման վրա բազմամասնագիտական թիմային քննարկումների արդյունքում կազմվել է թվով 157 երեխայի անհատական սոցիալական ծրագիր: Կարևոր տեղ է հատկացվել նաև երեխայի շահից բխող պետական և հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև շահագրգիռ այլ կողմերի հետ համագործակցությանը: Ցերեկային խնամքի կենտրոնում և/կամ դրանից դուրս գտնվելու որոշակի ժամանակահատվածում հաշմանդամություն ունեցող երեխաներին ըստ անհրաժեշտության ուղեկցողի ծառայությունից օգտվել է մեկ երեխա, ում մոտ առկա է աուտիստիկ սպեկտրի խանգարում: Ծառայության շրջանակում երեխան շաբաթական մեկ անգամ ուղեկցվել է տանից դեպի ցերեկային կենտրոն և հետադարձ՝ դեպի տուն: Ուղեկցողի ծառայության միջոցով ապահովվել է երեխայի անխոչընդոտ տեղափոխումը դեպի կենտրոն: Ուղեկցողն ընտրվել է հաշվի առնելով երեխայի զարգացման առանձնահատկությունները, մասնագետի հետ հաղորդակցման բարձր մակարդակը:

**Առողջապահական, սոցիալական եւ կրթական հարցերի շուրջ իրավաբանական խորհրդատեղեկատվական և ուղղորդման ծառայությունների տրամադրում.**

Բազմամասնագիտական թիմը, գնահատված կարիքի հիման վրա, ԿԴԻՀ երեխաներին և նրանց ծնողներին տրամադրել է համապատասխան խորհրդատվություն, ովքեր սոցիալական, առողջապահական և/կամ կրթական ոլորտներում հանդիպել են խոչընդոտների: Յուրաքանչյուր դեպքին համապատասխան սոցիալական աշխատողները կատարել են ուղղորդումներ, ինչպես օրինակ մանկապարտեզում տեղավորվելու, առողջապահական ծառայություններից անխափան օգտվելու նպատակով և այլն: Արդյունքում ապահովվել է շահառուների՝ անխոչընդոտ կրթություն ստանալու, առողջապահական հաստատություններից օգտվելու իրավունքը: Երեխաները և նրանց ընտանիքի անդամներն ակտիվ ներգրավվել են որոշումների կայացման փուլում, ծառայությունները տրամադրվել են գնահատված անհատական կարիքի հիման վրա: Սոցիալական աշխատողների ուշադրության կիզակետում են եղել երեխաների կրթությունից դուրս մնալու դեպքերի հայտնաբերումը, համապատասխան միջամտության իրականացումը և նրանց՝ կրթական համակարգում ընդգրկվածության ապահովումը, ինչպես նաև երեխայի ընտանիքում ապրելու իրավունքի իրացումը՝ բոլոր հնարավոր դեպքերում:

• Հաշվետու ժամանակահատվածում երեխաների առողջապահական հարցերի շուրջ ուղղորդումներ և խորհրդատեղեկատվական աջակցություն են ստացել կենտրոն հաճախող 49 ԿԴԻՀ երեխայի ծնող, որից 15-ը՝ Արցախից տեղահանված: Ուղղորդումներն իրականացվել են անհրաժեշտ և հասանելի բժշկական ծառայություններից օգտվելու, հետազոտություններ անցնելու, բժշկական խորհրդատվություն ստանալու նպատակով: Երեխաներից 40-ը ստացել են բժշկական խորհրդատվություն, որից 11-ը՝ Արցախից տեղահանված: 3 երեխա ուղղորդման արդյունքում ստացել են նյարդաբանական ախտորոշում:

Հաշվետու ժամանակահատվածում ցերեկային կենտրոնում ծառայություններ են ստացել թվով 157 երեխա, որից 37-ը Արցախից տեղահանված: Թվով 1 ԿԴԻՀ երեխա ծառայություն է ստացել արտակենտրոն ձևաչափով: Մշտադիտարկման նպատակով կատարվել է այց 1 վերամիավորված երեխայի ընտանիքի, որի ընթացքում վերագնահատվել է ընտանիքի կարիքները:

**Ցերեկային կենտրոն հաճախող երեխաներին սննդային փաթեթի տրամադրում**

Կենտրոնում գտնվելու ընթացքում յուրաքանչյուր ծառայություն ստացող երեխա հնարավորություն է ունեցել սնունդ ստանալու՝ նախապես կազմված և հաստատված ճաշացանկի հիման վրա: ԵԽՅԾՏ կենտրոնում սննդային աջակցությունից առաջին եռամսյակի ընթացքում օգտվել է 132 երեխա, որից՝ 33 -ը Արցախից տեղահանված:

**Հոգեբանական աջակցություն**.

Նախատեսվող ծառայության շրջանակում հոգեբանի կողմից տրամադրվել է հոգեբանական խորհրդատվություն՝ երեխային և ծնողին: Իրականացվել են հոգեբանական անհատական և խմբային պարբերական հանդիպումներ՝ միտված շահառուների հոգեբանական վիճակի բարելավմանը, տագնապների, ագրեսիվության բարձր մակարդակի նվազեցմանը, սթրեսակայունության ձևավորմանը և պահպանմանը, հոգեբանական տարաբնույթ բարդույթների հաղթահարմանը, պերցեպտիվ և կոգնիտիվ ոլորտներին, հուզական ինտելեկտին:

Կիրառվել է արտ-թերապևտիկ մեթոդներ, զրույցներ, թեստեր, գրաֆիկական թելադրություններ, նեյրոբիկա: Հոգեբանը օգտագործելով արտ-թերապևտիկ մեթոդներ՝ վեր է հանել չարտահայտված հույզերը և հույզերի արտահայտման նոր ուղիներ է տվել: Հնարավորություն է տրվել անձի ինքնաճանաչմանն ու ինքնադրսևորմանը, նյարդային գրգռվածության թուլացմանը, վախերի և տագնապների հաղթահարմանը: Ծառայությունը նպաստել է երեխայի հուզական կայունությանը, հասակակիցների հետ շփմանը, ինքնուրույնության, շարժումների (մանր և խոշոր մոտորիկայի) զարգացմանը, ուժեղ և թույլ կողմերի վեր հանմանը և այլն:

Երեխաների և ծնողների հետ աշխատանքում բացառվել է ցանկացած տեսակի խտրականության կիրառումը՝ ըստ ընտանեկան կարգավիճակի և հաշմանդամության:

**Հոգեբանի աջակցություն** է ստացել թվով 54 շահառու, որից 15-ը՝ Արցախից տեղահանված: Յուրաքանչյուրի հետ տեղի է ունեցել շաբաթական երկու կամ երեք հանդիպում: Աշխատանքը սկսվել է առաջնային գնահատմամբ, հաջորդ փուլում ձևակերպվել է հայցը: Երեխաների հետ աշխատանք է տարվել հետևյալի շուրջ՝ ագրեսիվության բարձր մակարդակի, կոգնիտիվ ոլորտի, տագնապայնության բարձր մակարդակի, սթրեսակայունության, կոնֆլիկտայնության, ինքնաճանաչման ուղղությամբ: Կիրառվել է

ագրեսիվության և տագնապայնության մակարդակի նվազմանն ուղղված տեխնիկաներ, պերցեպտիվ և կոգնիտիվ ոլորտի հետ կապված խնդիրների դեպքում կիրառվել են զարգացնող և շտկող աշխատանքներ: Խմբային աշխատանքները իրականացավել է ըստ տարիքային խմբերի բաժանման: Խմբերի տարբերակումը իրականացվել է առաջնայնություն տալով վերը նշված խնդիրներին: Դեռահասների խմբում իրականացվել է հոգեբանական ծառայություններից օգտվելու տեղեկատվական հանդիպումներ: Հիմնական տեխնիկաները և զրույցները դեռահասների խմբում ուղղված են եղել կոնֆլիկտայնության մակարդակի նվազեցմանը, ինքնաճանաչմանը, մասնագիտական ինքնորոշմանը, հուզական ինտելեկտին, հուզակամային դրսևորումներին: Որոշ տեխնիկաներ ուղղված են եղել շփման, հաղորդակցման հմտությունների զարգացմանը:

Ծնողների հետ իրականացվել է շարունակական բնույթ կրող հոգեբանական աշխատանք՝ ուղղված հոգեբանական բարդույթների հաղթահարմանը, տրավմաներին, վախերին, անձնային սահմանների ճանաչմանը և ընդունմանը, անհատական ծնողավարման մոտեցումներին, ինքնագնահատականին, բռնության դրսևորումներին: Աշխատանքի ընթացքում կիրառվել է զրույցի, թեստերի մեթոդներ, աուտոթրեյնինգ, արտ-թերապևտիկ և այլ տեխնիկաներ՝ ուղղված նախապես վերհանած խնդիրների լուծմանը:





Ծրագրի շահառուները օգտվել են կենտրոնում գործող տարբեր խմբակներից, ինչպես արտթերապևտիկ ծառայություններ ստանալու, այնպես էլ ժամանցային և մշակութային միջոցառումների միջոցով համայնքային կյանքին ակտիվ ներգրավվածությունն ապահովելու նպատակով:
Բոլոր խմբակներն ունեն թերապևտիկ բնույթ, իսկ երեխաները խմբակներում ներգրավվել են կենտրոնի մասնագետների ընդհանուր քննարկման, գնահատման և ուղղորդումների հիման վրա:

Թերապևտիկ ուղղվածությամբ նկարչական խմբակում արտ-թերապևտիկ, նկարչական, հագուստի գեղարվեստական ձևավորում, այլընտրանքային նկարչության տեխնիկաների կիրառմամբ իրականացվել է աշխատանք՝ ուղղված հուզական կայունության, ինքնուրույնության, հասակակիցների հետ շփման, հաղորդակցման, մանր մոտորիկայի, ճանաչողության զարգացմանը, կաշկանդվածության, անվճռականության, կոնֆլիկտայնության, ագրեսիվության, անինքնավստահության, վախերի և տագնապի հաղթահարմանը: Խմբակին մասնակցել է թվով 19 երեխա, որից 3-ը՝ Արցախից տեղահանված:

Լոգոռիթմիկայի խմբակում իրականացվել է հետևյալ աշխատանքները՝ ուղղված շնչառության, խոսքի, տեմպի և ռիթմի, կենտրոնացման բարելավմանը: Լոգոռիթմիկայի խմբակին մասնակցել են 22 երեխա, որից 2-ը՝ Արցախից տեղահանված:




**Սոցիալական մանկավարժի աջակցություն**

Սոցիալական մանկավարժի կողմից անհատական և խմբային աշխատանք է իրականացվել խաղ-վարժությունների, շարժախաղերի, դիդակտիկ, կառուցողական, սյուժետադերային խաղերի միջոցով՝ ուղղված շփման և հաղորդակցման հմտությունների զարգացմանը, ադապտացիոն խնդիրների հաղթահարմանը, կյանքի հիմնարար հմտությունների և ճանաչողական ոլորտի զարգացմանը: Անհատական և խմբային պարապմունքների տեսքով ծառայություն են ստացել 55 երեխա, որից 20-ը՝ Արցախից տեղահանված:










**Խոսքային խնդիրների հաղթահարմանն ուղղված ծառայություններ**

Խոսքային խնդիրներ ունեցող երեխաների համար տրամադրվել է լոգոպեդական ծառայություն, ովքեր կարիքի գնահատման արդյունքում ունեցել են համապատասխան աջակցության կարիք: Աշխատանքներն ուղղված են եղել երեխաների մոտ հնչարտաբերման

գործընթացի շտկմանը, խոսքի ընկալման ձևավորմանն ու զարգացմանը, խոսքի տեմպին և ռիթմին, կլման և ծամելու ակտի զարգացմանը, հաղորդակցման այլընտրանքային միջոցների կիրառմանը և ճանաչողական գործընթացների զարգացմանը: Աշխատանքներ են տարվել դիսգրաֆիա, դիսլեկսիա ունեցող երեխաների հետ՝ բարելավելով գրավոր և բանավոր խոսքը: Լոգոպեդական աշխատանքներն ուղղված են եղել երեխայի խոսքում առկա տարբեր դժվարությունների հաղթահարմանը և հաղորդակցման կարողության ձևավորմանը:
Անհատական և խմբային աշխատանքում լոգոպեդների կողմից աջակցություն է ստացել 46 երեխա, որից՝ 5 -ը Արցախից տեղահանված:

**Հենաշարժողական խնդիրների հաղթահարմանն ուղղված ծառայություններ**

Հենաշարժողական խնդիրների հաղթահարման նպատակով երեխաների հետ իրականացվել է ֆիզիկական թերապիա: Ֆիզիկական թերապևտը աշխատել է հատուկ կարիքներով, ֆիզիկական զարգացման հապաղում ունեցող, օրգանիզմի ընդհանուր

ախտահարմամբ, հենաշարժողական համակարգի խնդիրներ ունեցող երեխաների հետ, իսկ որոշ դեպքերում ծառայություն ստացել են նաև ընդհանուր ֆիզիկական վիճակի բարելավման կարիք ունեցող երեխաները՝ պոտենցյալ բարդությունները կանխարգելելու նպատակով:

Անհատական աշխատանքի ընթացքում ծառայություն է ստացել 21 երեխա, որից՝ 4-ը Արցախից տեղահանված:

**Վարքային խնդիրների հաղթահարմանն ուղղված ծառայություններ**

Հատուկ ուշադրության կիզակետում են գտնվում և համապատասխան ծառայություններ են ստանում այն երեխաները, ովքեր ունեն վարքային խնդիրներ: Սուր սթրեսային վիճակում գտնվող շահառու երեխաներին, ինչպես նաև աջակցություն ստանալու պահին հուզական և վարքային խնդիրներ ունեցող անձանց մասնագիտական աջակցություն տրամադրվել է հատուկ հոգեբանի, հոգեբանի, հատուկ մանկավարժի կողմից՝ ընտրած մեթոդաբանությամբ և միջամտությամբ:

Վերականգնողական ծառայությունները կենտրոնում կազմակերպվել են թիմային մոտեցմամբ և մասնակցային սկզբունքով: Թիմում ընդգրկվել են շահառուն և նրա ծնողը, լոգոպեդը, ֆիզիոթերապևտը, հոգեբանը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև այլ մասնագետներ:

Բազմամասնագիտական թիմն իր աշխատանքները կառուցել է՝ հիմնվելով բժշկական ցուցումների և միջամտության պլանի հիման վրա՝ սահմանելով յուրաքանչյուր երեխայի համար իրատեսական, հասանելի նպատակ: Աշխատանքներն ուղղված են երեխաների ինքնասպասարկման հմտությունների զարգացմանը, ֆիզիկական վիճակի բարելավմանը, որոնք իրենց հերթին նպաստում են նրանց կյանքի որակի բարձրացմանը՝ դարձնելով նրանց հասարակության լիիրավ անդամ և ներգրավվելով տարբեր հասարակական գործունեություններում:

**Հատուկ հոգեբանի աջակցություն**

Հատուկ հոգեբանի կողմից իրականացվել է անհատական աշխատանք, որոնք ուղղված են եղել ագրեսիվության մակարդակի նվազեցմանը, տագնապայնության մակարդակի իջեցմանը, կոնֆլիկտայնությանը, վախերի հաղթահարմանը, հոգեկան գործընթացների զարգացմանը (ուշադրության, հիշողության, մտածողության, երևակայության), վարքի կառավարմանը, հարմարման, շփման և հաղորդակցման հմտություններին, հուզական կայունությանը: Ժամանակ առ ժամանակ իրականացվել է նաև խմբային աշխատանք՝ ուղղված երեխաների ինքնակառավարմանը, ինքնարտահայտմանն և շփման հմտությունների զարգացմանը: Կից տեղեկատվական աշխատանք է իրականացվել նաև ծնողների հետ:

Հատուկ հոգեբանի աջակցություն է ստացել թվով 43 երեխա, որից՝ 3-ը Արցախից տեղահանված:

**Հատուկ մանկավարժի աջակցություն**

Հատուկ մանկավարժի աշխատանքում անհատական և խմբային աշխատանքների միջոցով ծառայություն է ստացել 46 երեխա, որից՝ 4-ը Արցախից տեղահանված: Երեխաների մոտ առկա են եղել զարգացման որոշակի խնդիրներ, ինչպիսիք են՝ աուտիզմ, աուտիստիկ սպեկտրի խանգարում, վարքային խանգարում, ինտելեկտուալ անբավարարություն, խոսքի զարգացման հապաղում, հոգեխոսքային զարգացման հապաղում, գլոբալ զարգացման հապաղում, ՄՈՒԿ, Դաունի համախտանիշ, Վիլյամսի համախտանիշ և վարքային այլ խնդիրներ:

Ընդհանուր առմամբ, հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի ծառայություններից օգտվել է 157 երեխա, որոնցից 37-ը Արցախից տեղահանված:

**Կրթական**

**19.02.2025թ.-ին** կազմակերպվել է <<Հեքիաթի ժամ>> Արտաշատ համայնքի գրադարանային համակարգի տնօրեն՝ Վերիգինե Հովհաննիսյանի և գրադարանի աշխատակիցների կողմից Հովհաննես Թումանյանի ծննդյան և Գիրք նվիրելու օրվա կապակցությամբ: Երեխաների համար ընթերցվեց հեքիաթներ, բանաստեղծություններ, կազմակերպվեց խաղ, իսկ վերջում նվիրեցին Կենտրոնին Թումանյանի

բանաստեղծությունների ժողովածուն: Միջոցառմանը մասնակցել են 51 երեխա, որից 23-ը՝ Արցախից տեղահանված:

**06.03.2025թ.-ին** կազմակերպվել է միջոցառում՝ նվիրված գարնանը: Երեխաները պատրաստեցին զանազան ձեռքի աշխատանքներ, նկարեցին գունեղ պատկերներ: Միջոցառմանը մասնակցել են 30 երեխա, որից 11-ը՝ Արցախից տեղահանված:

**Ծառայությունների մոնիտորինգ՝** Ծառայությունների որակի շարունակական բարելավման նպատակով շահառուներին հնարավորություն է տրվել գնահատել տրամադրված ծառայությունները՝ նախօրոք մշակված անանուն հարցաթերթերի միջոցով: Երեխաների ծնողների կողմից լրացված 45 հարցաթերթերի վերլուծությունը ցույց է տալիս, որ երեխաների ծնողները գոհ են տրամադրված ծառայություններից, կա զգալի/շոշափելի արդյունքներ հատկապես հատուկ կարիքներ ունեցող երեխաների առաջընթացի մասով:

**2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

| |
|---|
| Այն շահառուները, ովքեր բնակվում են Արարատի մարզի գյուղերում և ունեն փոխադրամիջոցի, ժամանակի դժվարություններ, մասնագետների գրաֆիկը հարմարեցվել է երեխաների հաճախելիության հետ՝ աշխատանքը ավելի ճկուն |

| |
|---|
| դարձնելու համար:<br>• Կենտրոնում մեծ թիվ են կազմում զարգացման բարդ խանգարումներ ունեցող երեխաները, որոնց հետ աշխատելու համար ավելի շատ մասնագիտական ներուժ է պահանջվում: |

**2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

| |
|---|
| Հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսվում են իրականացնել հետևյալ գործողությունները՝<br>• Տրամադրել սոցիալական ծառայություն և խորհրդատվություն ԿԴԻՀ մինչև 18 տարեկան երեխաներին և նրանց ընտանիքի անդամներին<br>• Տրամադրել հոգեբանական աջակցություն ԿԴԻՀ մինչև 18 տարեկան երեխաներին և նրանց ընտանիքի անդամներին<br>• Տրամադրել առողջապահական, սոցիալական և կրթական հարցերի շուրջ խորհրդատեղեկատվական աջակցություն և ուղղորդում ԿԴԻՀ մինչև 18 տարեկան երեխաներին և նրանց ընտանիքի անդամներին<br>• Տրամադրել վերականգնողական/ թերապևտիկ ծառայություններ<br>• Տրամադրել կրթական աջակցություն ԿԴԻՀ մինչև 18 տարեկան երեխաներին և նրանց ընտանիքի անդամներին, նպաստել կյանքի հմտությունների զարգացմանը,<br>• Տրամադրել ցերեկային խնամքի կենտրոնում և/կամ դրանից դուրս գտնվելու որոշակի ժամանակահատվածում հաշմանդամություն ունեցող երեխաներին ըստ անհրաժեշտության ուղեկցողի ծառայություն<br>• Սոցիալական աշխատանք իրականացնել շուրջօրյա խնամքի 5 հաստատություններում խնամվող երեխաների և նրանց ընտանիքների հետ՝ ընտանիքների հետ վերամիավորման բաղադրիչի շրջանակում: |

**2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

| |
|---|
| • **07.03.2025թ.-ին** իրականացվել է սեմինար՝<<Աշխարհի բժիշկներ>> ՀԿ-ի կողմից <<Օգնել օգնողներին>> թեմայով, որին մասնակցել են Կենտրոնի հատուկ հոգեբանը և լոգոպեդը: |